

ՄԻ ԱՆՇԱԺՈՐ ԷԶ ԺԱՌԻ ՏԱՂԱՍԱՎՅ ԶԱՔՅԱՐ ԼՄՆԵՑՈՒ ՍՏԵՂՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ

 այ գրականության մեջ միջնա-
դարյան հայ բանաստեղծ-տաղա-
սացների մասին մի ժամանակ
արմատացած էր այն տեսակե-
տը, ըստ որի «Քուշակից հե-
տո՝ մինչև նաղաջ Հովնաթանը և Սայաթ-Նո-
վան, այլևս գրական խոշոր դեմքեր շնու-
հանդիպում»¹:

Պրոֆ. Մ. Մկրյանը այս մասին գրում էր.
«Չնայած, որ այդ ժամանակաշրջանում այ-
նուամենայնիվ քիչ շնու տաղանդավոր բա-
նաստեղծներ, բայց, մանավանդ 17-րդ դա-
րում, ընդհանրապես նկատվում է լիրիկայի
թուղացում»²:

Միաժամանակ Մ. Մկրյանը թվում էր մի
շարք բանաստեղծների անուններ: «Հովնա-
սափ Սեբաստացին, Դավար Սեբաստացին,
Մինաս Թոխաթեցին, Հովհաննեսը, Զաքա-
րիա Գեորգյանց (ընդգծումը մերն է—Լ.
Մ.-Բ.), Դավիթ Սալածրեցին, Ներսես Մո-
կացին և ուրիշներ»³, որոնց կողքին «հրապա-
րակի վրա հայտնվում են էպիգրոններ և բա-
նագողներ»⁴, և այլն:

Սույն հոդվածին նպատակն է անդրադառ-
նալ Զաքարիա կամ, որ նույնն է, Զաքարա-
կամ Զաքար Լմնեցու կյանքին և գործունեու-
թյանը: Զաքարը ավելի հայտնի է «Գնունյաց
եպիսկոպոս» հորդորչումով:



Զաքարիա տաղասացի և նրա ստեղծագոր-
ծության ուսումնասիրության խնդիրը առա-

¹ Մ. Մկրյան, «XIII—XVIII դարերի հայ աշխարհիկ
գրականություն, Ընտիր նորուշներ», Երևան, 1938,
էջ 333IV.

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

շին անգամ հրապարակ հանեց Վիեննայի
Միսիթարյան Հ. Ներսես Ակինյանը դեռևս կես
դար սրանից առաջ:

Հենվելով ֆջ դարի բանաստեղծ Խաչատուր
Կեշարեցուն մի հիշատակարանի վրա, որ օգ-
տագործել էր գեռնս 1892 թվականին Հ. Հա-
կոբոս Տաշյանը Կեղծ Կալիսթենսի «Վարք
Աղեքսանդրի» զրուցի կապակցությամբ⁵, Հ.
Ներսես Ակինյանը կուահել էր, որ Զաքարիան
եղել է ոչ միայն տաղասաց, այլև գծագրող,
ծաղկող, նկարող, այսինքն մանրանկարիչ:
Ընդ մմին հայտարարվել էր, որ «Զաքարիա
տոհմով կիշնար Հայոց պատմության մեջ
անվանի Պոռշյանց տոհմեն»⁶:

Այսպիսով հասկանալի է, որ երբ Գարեգին
արքեպիսկոպոս Հովսեփյանը (Հետապայում
Գարեգին Ա. Կաթողիկոս Մեծի տանն Կիլի-
կիո, 1943—1952) մշակում էր իր մնայում
աշխատությունը հիշյալ տոհմի պատմության
մասին, իհարկե, չէր կարող Զաքարիայի գոր-
ծոնեության լուսաբանության կողքով անց-
նել: Ուստի և իր աշխատության Ա. Հատորի
ԺԱ. Գլուխը, որ կրում է «Պոռշյանց մնացորդ-

⁵ Ներսես վրդ. Ակինյան, «Զաքարիա եպիսկոպոս
Դնումյաց և յուր աղողերը», «Հպնդես ամսօրյա», 1909
թ., էջ 231—237, 279—288, 341—345, և առանձին
մատենաշարում՝ «Աղքային մատենադարան», Մթ,
Վիեննա, 1909, ԺԲ + 87 էջ:

⁶ Մրա մասին տե՛ս Մ. Թ. Ավելալիքյան, «Խաչա-
տուր Կեշարեցի XIII—XIV դ. դ.», Երևան, 1958,
220 էջ:

⁷ Հակովիքս վրդ. Տաշյան, «Ուսումնասիրությունը
ստույն-նակիսթենյա վարուց Աղեքսանդրի» [«Աղքա-
յին մատենադարան», Ե], Վիեննա, 1892, էջ 88—89.

⁸ «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 231.

ներ ժօ և ժէ դարերում» վերնագիրը, նվիրում
է Զաքարիա «Ճաղկող»-ի խնդրին⁹:



Կենսագրական տվյալները Զաքարիայի
մասին կցկուր են, ընդ որում նրա ո՛չ
ծննդյան և ո՛չ էլ մահվան թվականներն են
հայտնի:

Բայց և այնպես, անվիճելի է, որ Զաքա-
րիան եղել է Ալբամարի «Չնորհազարդ» որևէ
Գրիգորիս կաթողիկոսներից մեկի (առաջինը
1512—1544, երկրորդը 1544—1586)¹⁰,
գուցե և հաշորդաբար երկուամ էլ, և Հովսեփ
վարդապետի ժամանակակիցը, որոնցից վեր-
շինս ԶՂԳ (1544) «ամի փոխեցաւ ի դասս
անմահից»¹¹; նա եղել է նաև Կոստանդնու-
պոլսի Աստվածատոր պատրիարքի (1537—
1550) և սուլթան Սուլեյմանի (1520—1566)
ժամանակակիցը:

«Հայրենյոք էր Զաքարիա Քնունյաց
ափանց վրա հաստատված Խմբի գյուղեն, և
ասկե այլալ կոշվի Խմբեցի», — գրում է
Հ. Ն. Ակինյանը, — և ապա շարունակում.
«Բնակությամբ թե դաստիարակությամբ
հայտնի էլ, իր կենաց համար նշանակալից
եղած է իմ անապատն ալ, և կհորջորջվի
երբեմն կմեցի»¹²:

Մի ժամանակ Զաքարիան եղել է Գնունյաց
եպիսկոպոս, ուստի և տաղերից մեկում իրեն
կոշում է «Խմբեցի Զաքարիա» և «Եպիսկո-
պոս ամենայն Գնունեաց»¹³:

Սակայն, քանի որ «Գնունյաց եպիսկո-
պոսն... Վարագեն շատ հեռու չէ ապրած»,
Զաքարիան, ըստ Հ. Ն. Ակինյանի կուհման,
«կրնար, ինչպես Գնունցի, Խմբեցի, կմեցի
կոշված էլ, նաև Վարագեցի անվանվիլ»¹⁴,

⁹ Գարեգին արքայիսկարպոս Հովսեփյան, «Խաղաք-
յանք կամ Պոլշանք Հայոց պատմության մեջ, Պատ-
մա-հնագրական ուսումնասիրություն», մասն առաջին,
Վաղարշապատ, 1928, էջ 239—248:

¹⁰ Այսուղ և ստորև ժամանակական տվյալները
նշված են ըստ Մալաքիի արքայիսկարպոս Օրմանյանի
«Ազգապատում»-ի Գատորին կցված աշխատակիցի
(«Հոգուությամբ Բարգամեն եպիսկոպոս Կուփիսերյա-
նիք»), Երուապեմ, 1927, էջ մշթ: Հմմա. նաև Մերուպ
վրդ. Մարտույանց, «Հավաքարան անվանց կաթողիկո-
սաց Աղթամարա», Էջմիածին, 1916: Հ. Ներսես Վրդ.
Ակինյան, «Գավազանագիրք Կաթողիկոսաց Աղթամա-
րա, Պատմական ուսումնասիրություն» [«Ազգային
Ժամանակարան», ԶԶ], Վիճենա, 1920:

¹¹ «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 232:

¹² Նույն տեղում, էջ 231:

¹³ Նույն տեղում, էջ 238:

¹⁴ Նույն տեղում, էջ 235.

Ինչ վերաբերում է Զաքարիայի ստեղծա-
գործությանը, այն Հ. Ն. Ակինյանը երևան է
հանել ըստ 98 ձեռագրերի¹⁵ մեկուկես տաս-
նյակի սահմաններում, որոնց սակայն մեկ
տաղասացի վերաբերիլ գժվարին է հաստա-
տել, — ասում է հրատարակիչը:

Բացի «Կալիսթենյա Աղեքսանդրի վարուց
նոր խմբագրութենեն», Զաքարիա եպիսկո-
պոսի ընծայված տաղերը, ըստ Հ. Ն. Ակին-
յանի, «Երկու խմբի կրնանք բաժնել զանոնք.
1 Հարազատք և 2. Երկրայականք»¹⁶:

«Հարազատք» կոչված խմբի 6 տողերից
երեքը այրբենի շարքով հյուսված բանա-
ստեղծություններ են. 1. «Տաղ ի Խմբցույց
Զաքարիա եպիսկոպոսէ ամենայն Գնու-
նեաց», 18 տուն, 4 տող, ընդամենը 72 տող
(յուրաքանչյուր տառով 2 տող), 2. «Տաղ
վարդին և բլբուխն ի Զաքարիա եպիսկոպոսէ
Գնունեաց», 36 տուն=150 տող, և 4. «Տաղ-
վարդին և բլբուխն ի Զաքարիա եպիսկո-
պոսէ», 19 տուն=76 տողը Երկուսը ակ-
րոստիկոսներ են. 3. «Տաղ վարդին և
բլբուխն ըստ անուան երգողին Զաքարիա
եպիսկոպոսէ», 14 տուն=56 տող, որոնց
սկզբնատառերը տալիս են ու Զաքարիայէ
ընթերցումը, և 5. «Տաղ ըստ անուան երգո-
ղին ի Զաքարիա եպիսկոպոսէ գովասանու-
թիմ ումեն վարդապետի», 13 տուն=42
տող, որոնց սկզբնատառերը կարդաց-
վում են. «Զաքարիայ նըւաստէ»: Բացի դրա-
նից, մի տաղն էլ՝ 6-րդը, ուն գծողէ Զաքա-
րիայէ վերնագրով, ո՛չ այրբեն է, ո՛չ էլ ակ-
րոստիկոս:

Հայոց տաղաշափության պատմության
տեսակետից հատուկ ուշադրության արժա-
նի է 5-րդ տաղը, որը կրկնակի ակրոստի-
կոս է, քանի որ տալիս է Երկու ընթերցում.
Մեկը սկզբնատառերից՝ «Զաքարիայ նըւաս-
տէ», մյուսը վերջատառերից՝ «Վարդապե-
տին էլ»¹⁷:

«Երկրայականք» տաղերի խմբի մեջ Հ. Ն.
Ակինյանը դնում է «Տաղ Վարագայ խա-
շին»¹⁸, 15 տուն=60 տող, և երկու ակրոս-
տիկոս. 1. «Տաղ ողորմովկ», 7 տուն=28
տող, ուր կարդացվում է «Զաքարիա», և 2.
«Տաղ վասն զարիպութեան», 12 տուն=48

¹⁵ Նույն տեղում, էջ 234:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Նույն տեղում, էջ 236:

18 Հավանական է, որ այս տաղի հետևողակա-
նությամբ կամ աղդցությամբ լինի հորինված, վրա-
ցերեն լեզվով, Կոտոց անապատի միաբան Գևորգ
վարդապետ Կակարենց Գորեցու (ԺԲ դար) «Տաղ
Վարագայ խաշին» (հրատարակել ենք, մենք ուրա-
տանի պետական թանգարանի Տեղեկագրից Ժ հատո-
ւում, Թրիլիսի, 1940, էջ 105—108),

տող, ուր կարդացվում է «ի ղարիպ Զաքարէ», Ալբենով է դասավորված «Տաղ ի Սուրբ Կոյս Մարիամ»-ը, 36 տուն=144 տող:

Ալբենի կարգով է հյուսված, ի միջի ալոց, և Մ. Մկրյանի հրապարակած՝ «Ալ տաղ Զաքարիա Գնունեաց եպիսկոպոսէ». 70 տողից բաղկացած, որ սկսվում է «Առաջին մարդոյ նման են բառերով»¹⁹, սակայն առանց գործածելու է տառը, որը բացակայի է Մաշտոց-Մերոպայան այբբենում, Մինչեւ Հ. Ն. Ակինյանի հրատարակած տաղերում առկա են ինչպես է, նույնպես և օ և ֆ տառերը:

Զաքարիայի տաղերը երբեմն պարունակում են կարեռը ինքնակենսագրական նյութեր:

Այսպէս, օրինակ, «Վարդին և բլուզին» սվիրված տաղերից մեկում բանաստեղծը նշում է.

«Ատէ զայս աշխարհըս իմ Գընունցի,
Որ կու թափէ զմարդիկ քան զտերև ծառի,
Դարձի՛ր ի մեղաց ու գործէ՛ բարի,
Որ կը կըրէ ամօթ ի կալն Ուռնայի»²⁰,

Նույն թեմային նվիրված մի ուրիշ տաղում կարդում ենք:

«Զաքարիա յիմար գերի,
Սէրըն փուշ է դառն ու լեղի,
Դու ասոտ արա թաղրիի»²¹ քեզի,
Որ անդ կըլնիս խեղճ ու լալի»²²:

«Ի գծողէ Զաքարիայէ» վերնագիրը կրող տաղը հեղինակն ավարտում է «Հետեւալ տողերով», որ նվիրված են Կոստանդնուպոլիս Աստվածատուր պատրիարքին, և ուր, ի միջի ալոց, հիշված է իր ուսուցիչ Հովսեփ Աղթամարցին, որը վախճանվել է 1544 թվականին.

«Տէր Աստուածատուր իմ շնորհալի,
Զքեղ աղաշեմ յոյժ փարելի,
Որ վայելող ես այս տառի,
Յիշեա և զիս դու ի բարի:
Զաքարիա գրծագրողի
եւ անվարժող նըկարողի,
Մի՛ մեղաղիէք դասք արհեստի,
Զի կար մեր այս էր որ ցուցի,
Եւ իմ վարպետըն սըմբալի,
Եւ Տէր Յովսէփին Աղթամարցի,
Ի յայսմ ամի վերափոխի,
Եւ ինձ սուգ եղէ անբուժելի,
Դուք ասացէ՛ք սրտով ի լի

¹⁹ Մ. Մկրյան, հիշյալ գրքը, էջ 169—170.

²⁰ «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 281:

²¹ Այսինքն՝ խորհուրդ, խորհրդակցություն:

²² «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 283:

ինձ և նորա՝ Տէրն ողորմի,
Որ քաղցրուսոյց էր և բարի,
Եւ անձանձիր յարհեստ բանի»²³,

Ահա և Վանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում երբեմն պահվող ձեռագիր Ավետարանի հիշատակարանը, ուր, ի միջի ալոց, կարդում ենք.

«Դրեցաւ Սուրբ Աւետարանս այս ձեռամբ Զաքարայ եպիսկոպոսի ի գաւառու, որ կոչ Ամոկ, ի կղզիս, որ կոչի Լիմ, ընդ հովանեաւ Սուրբ Գէրոբայ զաւրավարին, ի հայրապետութեան Տեառն Գրիգորիսի և ի թագաւորութեան Խոնթկար անոն փատշահի, որ է, տառապանք ազգիս Հայոց, յայսու ժամանակի, վասն ծովացեալ մեղաց մերոց, ի թուաբերովթեան Հայոց ԶՂԸ (1549)»²⁴:

Այս հիշատակարանի գրության տարեթիվը՝ 1549՝ պարզապես համապատասխանում է նրա մեջ հիշված «Տեառն Գրիգորիսի», այսինքն Գրիգորիս Բ Աղթամարի կաթողիկոսի (1544—1586) «Հայրապետության» ժամանակաշրջանին:

Զեռնարկելով իր՝ «Զաքարիա եպիսկոպոս Գնունյաց և յուր տաղերը» շահեկան գործը, ուր հրապարակ են հանված Զաքարիային անկասկածելիորեն պատկանող 6 տաղերը («Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 238, 279—284) և երկուտասան «կափայք ի պատմությունն Մեծին Աղեքսանդրի» (էջ 341—345), Հ. Ներսես Ակինյանը կարեռ էր համարել նախազգուշացնել ընթերցողին, որ նա «հրատարակել փորձելով միշնադարյան հայ բանաստեղծիս մտաց արտադրությունքն առաջին անգամ», վստահ է, «Թէ գոգիու մը ընծայած պիտի ըլլանք ալոց՝ բանաստեղծիս այլ անծանօթներն ալ ի լույս հանելու, ըլլա գրչագրաց հիշատակարաններ իր ձեռքեն, որոնք իր կենսագրությունը կրնան լուսավորել, ըլլա նորանոր տաղեր, որոնք իր մտաց կորովությունն ավելի կըրնան բարձրացնել»²⁵:

Հ. Ն. Ակինյանի այս տողերին մենք ի վիճակի ենք արձագանքել այսօրվա ելություն, հիմք ունենալով Զաքարիա տաղասացի մի նորահայտ բանաստեղծությունը, որը մենք հրատարակում ենք ստորև:

Թիֆլիսիի պետական համալսարանի գրադարանը 1939 թվականին մի մասնավոր

²³ Նույն տեղում, էջ 284:

²⁴ Երվանդ Լալյայան, «Եղուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», Ա, Թիֆլիս, 1915, էջ 651—654:

²⁵ «Հանդես ամսօրյա», 1909 թ., էջ 236:

անձից ձեռք բերեց հայերեն ձեռագիր՝ Տաղարան-Գանձարան Ժէ-Ժէ դարերի, որն իր բովանդակությամբ տարրերվում է նմանօրինակ ժողովածուներից, Զեռագիրը թղթից է, $10 \times 15,5$ սմ. Ենթությամբ, գրությունը $6,5 \times 12$ սմ., սկիզբն ու վերջը թերթ կազմով, պարունակում է ընդամենը 134 լիտր, մեջ 2 էջ մաքուր թղթած, ուր հետագայում գրվել է ուսանակոր սիրային բովանդակությամբ թուրքերն-ադրբեջաներն լեզվով և արաբական գրությամբ²⁶, Զեռագրի մեջ աշքը է ընկնում, նախ, Փարման մանկան պատմությունը (սկզբում թերթ), որը գրավում է ժողովածուի գրեթե կեսը²⁷. Ասպա գալիս են Գրիգորիս Աղթամարցու Հանրածանոթ տաղերը, թվով հինգը. «Մաքուր պատկերված», «Դուռ ես արեգակ», «Արեգնապայլ գեղով», «Մաղկունք ասեն» և «Դու դրախտ Եղեմայ»²⁸:

Իսկ այս տաղերի ետ ու առաջ գետեղված էն հետևալ երկերը. «Տաղ Ստեփանոսի», Տաղ Ուկա որդոյն», «Պատմութիւն վասն վաճառականաց Մարիսայ է և Կոստայու ասացեալ»²⁹, «Վարդանայ պատասխանի թղթին պլալին», «Տաղ Զաքարայ եպիսկոպոսի լմենցոյ ասացեալ», «Երդ պաշտպան գեղեցիկ ասացեալ՝ Ով սուրբ մանկունք», «Տաղ ձայնի ասացեալ՝ Աղբիւր կենդանի», «Տաղ Աղամայ ասացեալ՝ Ծնոնդ Աղամայ», «Տաղ Երուսաղեմայ՝ Գովենք զքեզ, Երուսաղէմ»³⁰ և «Գովասանք Սուրբ Կարապետին» (վերջը թերթ)³¹.

²⁶ Զեռագրի նկարագրությունը տե՛ս մեր Հոգվածում՝ «Եղորհրդային Վրաստան» (Թրիլիսի), 1939 թ., 27 IX, № 271.

²⁷ Մրա Ճամին՝ «Եղանակի նազարյան, «Պատմություն Ֆարման» մանկան (միջնադարյան պոեմ)», Երևան, 1957, 195 էջ:

²⁸ Կարապետ Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցին և յուր տաղերը, Թիֆլիս, 1898, էջ 48—71, 76—79; Հ. Ներսոսյան գրք. Աղինյան, «Գրիգորիս Աղթամարիս Աղթամարի, Կյանքն ու բերթվածները [ՏԱՂՋԱՅԻՆ մատենադարան», մ2], Վիճեննա, 1958, էջ 20—23, 75—79:

²⁹ Այս պատմությունը հիշեցնում է Կ. Մելիք-Օհանջանյանի խմբագրությամբ և առաջարանով լուս ընձայված մեջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից (Երևան, 1957) ժողովածում տեղ գտած օրինակները:

³⁰ Թերեւս համապատասխան Սաղմսի (Ճեկ) ներշնչամբ և նմանողությամբ՝ «Գոված, Երուսաղէմ, գՏէր, և օրհնեաւ զևսոտած ք Սիոն»:

³¹ Հմմտ. Սայաթ-Նովայի թառակեղվան խալք, որ սկսվում է հայերեն (Թրիլիսիի բարբառով)՝ «Մշու սուլթան Սուրբ Կարապետ թարփիւնը բառերով (Մ. Ա. Հասրարյան, «Մայթ-Նոված», Երևան, 1959, էջ 80). շատ կենսնպրադյան ձեռադրի:

* * *

Զաքար Լմենցու նորահայտ տաղը, որ զետեղված է այս ժողովածուում, պարունակում է 6 տոմ, տունը 4 տող և տողը 15 վանկ. Այն տիպիկ նմուշն է տաղերի այն շարքի, որ առանձնապես տարածված էր Աղթամար-Լիմ-Կտուց— Վարագ-Մոկսի միջավայրում դեռևս ժերից, ուր խոսվում է վասն «շորից մշտահոս գետոցն Աղենական աղբերէն յառաջ խաղացեալ առ ի տիեզերաց ոռոգումն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէս», «Եւ սոցա գոլով նմանապէս թուով ուոճացեալք ի կենդանական աղբերէն՝ ոռոգանել զպասքեալ միտս մարդկային բնութեանս»³²:

Օգտվելով առիթից, կուզեինք նշել, որ ժերի գրիշ Աղենական որպակորում է ռԵղեմական գետերն այսպես.

«Փիսոն՝ կոչող Սեմայ ազգի, Գեհոն՝ զՔանան յազատ երկրի, Տիգրիս-Եփրատ՝ բազմադիմի Ցաքրէթական Հայկազունի»³³, Իսկ ԺԲ դարի գրիշ Զաքարիան գրում է. «Ան և գետոցը զանազան, Որք ի դրախտէն յառաջ խաղան՝ Փիսոն, Գեհոն ընդ Տիգրիսն այն Եւ Եփրատէսըն Հրաշազան. Որ ցուցանէ յայտնի նըշան Զառ ի շորիցն Համանըմանն, Փիսոն՝ ասէ զըմատթէոս, Գեհոն՝ զՄարկոսն առիժանման. Տիգրիս զՂուկաս եղնանըման Եւ Եփրատէս՝ զարծին Ցոհան»³⁴:

«Տաղ ի Զաքարայ եպիսկոպոսէ Լմենցոյ ասացեալ» վերնագիրը կրող բանաստեղծությունը, որ մենք ստորև հրատարակում ենք, արձագանքում է հին և միջնադարյան հայ գրականության մեջ արմատացած այն տեսակետը, որ Եղեմը (դրախտը) գտնվելիս է եղել շուրջ գետերի Փիսոնի, Գեհոնի, Տիգրիսի և Եփրատի շրջապատում: Եկ այս տեսակետը, բիսելով Աստվածաշնչի Մննդոց գրքից (թ 10—14)³⁵, հետագայում այլևս կերպ մեկնաբանվել է մատենագիրների կամ գրիշների կողմից:

Այսպիս, օրինակ, Անանիա Շիրակացին իր «Մակո բացայալութիւն» թուոյց երկասիրության մեջ գրում է. «Եղեմական աղբ-

³² Ե. Լալայան, հիշյալ աշխատությունը, էջ 599, 604:

³³ Նույն տեղում, էջ 594:

³⁴ Նույն տեղում, էջ 598, 602:

³⁵ «Հմմտ. Մերուով եպիսկոպոս [Տեր-Մօվսիսյան լ. ՀՀատվածի երկաթաղիք Հին Կտակարանի հանդերձ հապական պատկերավլ [«Քրիստոնեական Արմենոց գրքիկան», Վ], Պետրոպալադ, 1915, էջ 2,

րէն, որ է սեռական առաքինութիւն, շորս բղիսն առաջս: Առաջին Փիսոն, որ կոչի բերան հրոյ, ... իսկ երկրորդ գետն՝ Գեհոն, որ կոչի լանջը կամ եղջիր ցլու, որ պատէ զեթովակիա, որ կոչի նուաստութիւն վատութեան, ... իսկ երրորդ գետն՝ Տիգրիս, որ երթայ յանդիման Ասորոց, որ է ողջախոնութիւն: ... իսկ շորրորդ գետն՝ Եփրատէս ոչ ունի վայրս և գետս դէմս գնացից, որ է արդարութիւն, զի ոչ ընդ իշխանութեամբ ուրուք ի դոցանէ է և ոչ իշխէ ումեք»³⁶:

Հայերն ձեռագիր Ավետարաններին կըցված հիշատակարաններում շորս թիվը սովորաբար օժտված է սիմվոլական բովանդակությամբ, որոնք են:

Չորս ծագք՝ աշխարհին՝ արևելք, արևմտութ, հիւսիս և հարաւ (հմատ, հետագայում շորս «քուստի»-ների գաղափարը Սասանյան իրանում և շորս բդեշխության գաղափարը Հայքում):

ՏԱՂԻ ԶԱՔԱՐԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԼՄՆԵՑՈՅ ԱՍԱՑԵԱԼ

- 1 Դու, արեգակ, նման ելանես ի յառաւոտէ, Պայծառ ճառագայթ լուսով կու լնուս զաշխարհս համօրէն, Պատկեր գեղեցիկ լուսով նկարեալ ի յերարողէն, Ճոխ և ճեմելով ծագիս թաւալմամբ ամէն վաղօրէն:
- 2 Դու ևս բոլորեալ աշխարհին լուսատու ի տասնուշնդէն, Գիշերն մեղմով զնաս, փարատես զխաւարն ի տանէն, Դու պայծառ մոլար աստեղ երկիս ի յերեկոյէն, Ոստոստ աստեղօք շրջիս միշտ ի վառան աղօտ լուսէն:
- 3 ՅԱղեն դրախտ ես, դու տնկեցար Հզօրին բազկէն, Վէմ անմահութեան, պտուղ միշտ կանալ ես և լուսեղէն, Դու թեթև ամպ, անձրւին մեղմ ցօլ ես ի յառաւոտէն, Զարդարին երկիրս բուսով ծառք և տունք զաւրանան ի քէն:
- 4 Ի գետն Փիսոն նմանիս, ելանես յծմաւն լեռնէն,

Չորս նիւթեղէն աշխարհի՝ հող, ջուր, օդ և կրակ:

Չորս անկիմ և եղջիւրք սեղանոյւ նույնն ըստ «տեսիլք»-ի Եղիկիել մարգարեի՝ Էառակերպյան աթոռու:

Չորս թեք խաչի:

Չորս առաքինութիւնք հոգույ՝ խոհեմութիւն, արիութիւն, ողջախոնութիւն, արդարութիւն:

Չորս բանք Աւետարանի՝ պատգամ, պատուիրան, սպանալի և աւետիս:

Չորս եղանակը խաւից Աւետարանի՝ հրաման, խրատ, օրինակ և վկայութիւն:

Չորեկերպեան կենդանիք՝ մարդ, առիւծ, ցուկ (եղն) և արծիւ:

Չորս ավետարանիչք՝ Մատթէոս մարդն՝ Փիսոն, Մարկոս առիւծանման՝ Գեհոն, Ղուկաս եղնանման՝ Տիգրիս, և Յովհաննէս արծիւն՝ Եփրատէս: Խունք՝ հրոյ բերան, բարձրաբերձ, արիութիւն, Հնազանդութիւն: Եկ այն:

Գաս ի յԱպրշահ երկիրն և ոսկին բուսանի ի քէն, Դու, Գեհոն, մանրածաւալ ելանես ի կուսին լեռնէն, Հատանես զեթովակիայ, Եգիպտոս զովանալ ի քէն:

5 Դու, ծիծաղայնաց Տիգրիս, ելանես ի գեղջն Ոլորէն, Ասորեստանօք պտտիս, արբենան երկիրս համօրէն, Դու, երկու ականց Եփրատ, ելանես ի Ոսկեանցն ակնէն, Միանաս դու ընդ Տիգրիս, ոլորս տաս ի Պարսկաց տանէն:

6 Մտանես ի ծովն մեծ, գադարեն ալիքդ, որ ի քէն, Մառաւիս, որ առ քեզ եմ, արբեցոյ ի քո Զսովեալս ի սեղան կոշեալ, կերակրեալ զուրտ շրէն, Բաժակ բերկրութեան ես դու, արբեցոյ ի քո սուրբ որթէն:



Զաքար Լմնեցու ասղին կցված է հիշատակարան հետեւյալ բովանդակությամբ.

«Զաքարիալ բանս երգողի շարժելով առ քեզ, սիրելի, տիմարիս բանս ընթերցի՛ր. աւրհնութիւն Փրկչին եղիցի»:

³⁶ Աշառ Արքանամյան, «Անահիա Եփրակացու մատենադրությունը», Երևան, 1944, էջ 242—243: